ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Որոշում

Գրանցման ամսաթիվ՝ 14/12/2005

Հրապարակման ամսաթիվ՝ 26/12/2005

29/07/2005 թիվ 387Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային կազմակերպությունների կողմից աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար արտարժույթով վճարումների իրականացման» կարգը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Տ. Սարգսյան**

2005 թ. օգոստոսի 08
Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2005 թվականի հուլիսի 29-ի թիվ 389 Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային կազմակերպությունների կողմից աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար արտարժույթով վճարումների իրականացման դեպքերն ու կարգը:

1. Սույն կարգում օգտագործվող տերմիններն ու հասկացությունները համապատասխանում են «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տերմիններին և հասկացություններին:
2. Սույն կարգի իմաստով «միջազգային կազմակերպության» հասկացությունը համապատասխանում է «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի(ընդունվել է 2000 թվականի հուլիսի 28-ի ՀՕ-85) 2-րդ հոդվածի 3-րդ մասում տրված սահմանմանը:
3. Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ ֆիզիկական անձանց աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատավարձի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով, եթե համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ կնքված միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
4. Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերով նախատեսված վճարումները կարող են իրականացվել արտարժույթով՝ անկանխիկ ձևով: